ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴՏՊ-ԱՍՀՆ-ԶՏ-2022/1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

«19» մայիսի 2022թ.

Քաղ. Երևան

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը,

ի դեմս գլխավոր քարտուղար Սամվել Մուրադյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Աջակցություն վիրավոր զինվորներին և զինվորական հաշմանդամներին» բարեգործական հասարակական կազմակերպությունը, ի դեմս նախագահ Հ. Մինասյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 31-ի N 421-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծառայության մատուցման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ գումարից մինչև 12 870 000 (տասներկու միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառման շրջանակներում մատուցվելիք ծառայությունները (այսուհետ՝ ծառայություններ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված N 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին ծառայությունների մատուցման ժամկետները (ծառայությունների մատուցման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. Մատուցված ծառայությունները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. մատուցված ծառայության արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. մատուցված ծառայության մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար մինչև դեկտեմբերի 20-ը պետական մարմին ներկայացնել հանձնման ընդունման ակտը՝ համաձայն սույն պայմանագրի N5 հավելվածի և հաշվետվություններ համաձայն սույն պայմանագրի N2 և N3 հավելվածների:

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.10 «Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքներն ընդունվելուց հետո առաջացած տնտեսումները (խնայողությունները) կազմակերպությունը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ արդյունքն ընդունվելուն հաջորդող տասը աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:»:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 5) և հաշվետվությունը:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով

նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 4) նախատեսված ամիսներին, ըստ պայմանագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների կատարման արդյունքի:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված միջոցառումներին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները,

գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ mlsa.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011040426 ՀՎՀՀ 01506515	«Աջակցություն վիրավոր զինվորներին և զինվորական հաշմանդամներին» բարեգործական ՀԿ ք. Երևան, Մինաս Ավետիսյան 4փ. 6շ. բն"19 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570026278650100 ՀՎՀՀ 00904586
(ստորագրություն) Կ. Տ.	(ստորագրություն) Կ. Տ.

Հավելված 1
2022թ. մայիսի 19-ին
կնքված N ԴՏՊ-ԱՍՀՆ-ԶՏ-2022/1 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
	Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների տրամադրման ծառայություններ	Վիրավորում ստացած 36 զինվորների 39 ստորին վերջույթների պրոթեզորումն ապահովելու նպատակով անհրաժեշտ նյութերի ձեռքբերում	39 հատ ստորին վերջույթների պրոթեզների համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերում, պրոթեզավորման հարմարեցման, պրոթեզը կրելու հմտությունների ուսուցման ծառայություն	39 ստորին վերջույթների պրոթեզների տրամադրում ստորև թվարկված անձանց՝	01.12.2022	ամսական	12,870,000

ԱԱՀ	Պրոթեզի տեսակ	Քանակ
Հարություն Մկրտչյան Գևորգի	Ազդրի էնդոսկելիտար մոդուլյարպրոթեզ սիլիկոնե լայներով	1
Տիգրան Դանիելյան Ռաֆայելի	Ազդրի էնդոսկելիտար մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1
Արամ Ասլանյան Նիկայի	Ազդրի էնդոսկելիտար մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1
Արմեն Պողոսյան Էդվարդի	Ազդրի էնդոսկելիտար մոդուլյար	1

					պրոթեզ սիլիկոնե լայներով					
				Աշոտ Խաչատրյան Համլետի	Ազդրի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1				
				Վարդան Վարդանյան Դավիթի	Ազդրի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1				
				Էրիկ Եոյան Վարուժանի	Ազդրի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1				
				Վադիմ Մկրտչյան Էդիկի	Ազդրի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1				
				Արթուր Գրիգորյան Հրաչիկի	Ազդրի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1				
				Արտյոմ Շահնազարյ ան Իգնատի	Ազդրի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1				
				Վահե Ղազարյան Արտյոմի	Ազդրի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ	1				

	սիլիկոնե լայներով	
Արմեն Միրզոյան Արմեն	Ազդրի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1
Արամ Արզումանյա ն Արայիկի	Սրունքի Բուժամարզա կան պրոթեզ սիլիկոնե լայներով	2
Ներսես Քարիմյան Արտակի	Սրունքի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1
Մարտին Հովհաննիսյ ան Մաթևոսի	Սրունքի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1
Հենրիկ Եգորյան Ավետիքի	Սրունքի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1
Գևորգ Իսունց Գառնիկի	Սրունքի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1
Նարեկ Համբարձու մյան Կարենի	Սրունքի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1

Միքայել Գրիգորյան Գրիգորի	Սրունքի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	2
Սերգեյ Մովսիսյան Արմենի	Սրունքի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1
Առնո Ղազարյան Բորիսի	Սրունքի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	2
Դավիթ Դավթյան Հակոբի	Սրունքի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1
Ալեքսանդր Ղամբարյան Ռուբիկի	Սրունքի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1
Արմեն Հարությունյ ան Մելսիկի	Սրունքի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1
Ռաֆիկ Գրիգորյան Հրաչիկի	Սրունքի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1

Արմեն Պետրոսյան Տիրանի	Սրունքի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1
Սաշա Իշխանյան Արայիկի	Սրունքի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1
Սևակ Գրիգորյան Վալերիկի	Ոտնաթաթի պրոթեզ ըստ շոպարի	1
Ներսես Ներսեսյան Վաչիկի	Ոտնաթաթի պրոթեզ ըստ Լիս ֆրանկի	1
Վահե Աբրահամյա ն Վարազդա տի	Ոտնաթաթի պրոթեզ ըստ Շոպարի	1
Դավիթ Սահակյան Գեղամի	Ոտնաթաթի պրոթեզ ըստ Լիս ֆրանկի	1
Մարտին Սիմոնյան Սուրենի	Ոտնաթաթի պրոթեզ ըստ Շոպարի	1
Ռոման Մուսայելյան Ռուբենի	Կնքազդրայի ն էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ	1
Ալիկ Դավթյան Արշավիրի	Սրունքի էնդոսկելիտա ր մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1
Ռազմիկ Քամալյան Սենիկի	Սրունքի էնդոսկելիտա ր մոդուլյար	1

					պրոթեզ սիլիկոնե լայներով				
				Նորայր Փարսադանյան Մելորդիի	Սրունքի էնդոսկելիտար մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով	1			
	Ընդամենը					39			12,870,000

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

(ստորագրություն)
Կ. Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված 2
2022 թ. մայիսի 19 -ին
կնքված N ԴՏՊ-ԱՍՀՆ-ՀՏ-2022/1 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

(ստորագրություն) Տ.Ս.

ԿԱՏԱՐՈՂ

(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 3
2022 թ. մայիսի 19 -ին
կնքված N ԴՏՊ-ԱՍՀՆ-ՀՏ-2022/1 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի ----------ամսում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ

Ծախսային հոդվածներ		Հաշվետու ժամանակահատվածում			Տարեսկզբից աճողական		
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	ծածկագիրը	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր
1	3	6	7	8	9	10	11
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	x	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**
Հատուկ նպատակային այլ նյութեր	***426900***						
Այլ մասնագիտական ծառայություններ ձեռքբերում	**424000**						

Հանձնեց՝
Տնօրեն՝

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 4
2022 թ. մայիսի 19 -ին
կնքված N ԴՏՊ-ԱՍՀՆ-ՋՏ-2022/1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Միջոցառման													
անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների տրամադրում	-	-	-	-	3 217 500	6 435 000	9 652 500	12 870 000	12 870 000	12 870 000	12 870 000	12 870 000	12 870 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված

2022 թ. մայիսի 19 -ին
կնքված N ԴՏՊ-ԱՍՀՆ-ԶՏ-2022/1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պետական մարմին
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.